



ՏՆՕՐԷՆ ԽՄԱՂԳԻՐ
ԵՒ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏԱՒ
ՆԻԿ. Ս. ԹԻՒՂԵՆՏՅԱՆ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

ՊԵՐՏՈՐ 20 ՓՐ. ԱՐԾԱԹ

ՌԱՃԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ուրբ	
Կ. Պօլոյ	Համար
Ցարնկան	772. 400
Վեցամսեայ	» 80
Եռամսեայ	» 28

Գաւառաց Համար	
Ցարնկան	772. 150
Վեցամսեայ	» 75
Եռամսեայ	» 40
Օտար երկիր արկն. 40 Ֆր.բ.	

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Մասիս կ'իթուի թէ վշտացած է մեր այն ակնարկութեանը դէմ, զոր ըրած էինք ուրբաթ օր, ցոյց տալու համար թէ՛ Ղալաթիոյ խորհրդարանը Մատթէոս սրբազանին և վարչութեան դէմ տեղի ունեցած ցոյցը՝ Մասիսի նախորդ աւուր հրատարակած յօդուածին արդիւնքն եղած էր:

Մեր այս ըսածը կատարնալ ճշմարտութիւն մ'էր, զոր աւելայն Մասիս իբրև թէ ամբաստանութիւն մը համարելով զայն շք. օր հերքելու կեցնէ և իւր ցշ. աւուր գրածը կերպիւ իւր յետս կոչել կ'նայի. բնակ թէ Վասիսի այն յօդուածը ազգային խռովութեանց ու անոնց հեղինակներուն դէմ էր, ինչպէս ուրեմն չորիք շարթի աւուր խռովարարները քաջալերած կըրնար ըլլալ:

Մասիսի այս տողերը—ներսի միջոց ըսել— զուտ փախուստի միջոց մ'է և պատրուակ ժողովրդային սոյն յօդուած պատասխանատուութեանն—եթէ կայ իւրօք գործ ներքե պատասխանատուութիւն մը—ինքզինքն ազատելու համար Մեք ընդհակառակն պատասխանատուութիւն մը չնշմարելէս զատ Մասիս ալ մեծապէս գոյութեան արժանի կ'համարէինք, որ այսքան ատեն վարչութեան և Մատթէոս սրբազանին հաւատարմութեան դերը կատարելէ ետք, այժմ կեցնէ իր զիտակցութեանն ու իր ճիշտ համարման—ինչպէս ինքը կըսէ— ճշմարտութիւնը իւր պարզ մերկութեամբ քաջալերու քառնելու քաջութիւնը կունենայ, յայտնապէս բնակ թէ:

«Միջոց Ս. Պատրիարքը հրատարած՝ Պէրթոյ ժամանակ կանցընէ, ասոյն ազգային թէ անբերն և թէ՛ արտաքին գործերն առ խարխախ կ'ընթացան»:

Կաղաչեմ որ Մասիսի սատուներուն մէջ՝ ազգային խռովութեանց և անոնց հեղինակներուն դէմ ակնարկութիւն մը, բառ մը ցոյց տրուի. ընդհակառակն Մասիս պարզապէս կ'գանգատի թէ ազգ. գործոց վիճակը վատթար և առ խարխախ ընթացք մ'ունի. Ո՛վ որ այս խօսքը կըսէ՝ ազգ. գործոց զլուխը դանտուղ գործադիր մարմինը կամ պաշտօնեայն մեզ զազրանաց ենթարկել կամ պաշտօնէն ձգել ուղած կըլլայ: Մասիսի մեծ խմբագիրը կործնիք բոս բաւականին քաղաքագիտական գործոց ու գործուած, ծոց հմուտ է գոնէ այսքան ինչ հասկնալու համար թէ՛ վարչական ընթացքն մը դէմ արքային ղարչական մարմնոյն անկումն ուզել ըսել է:

Հետեւաբար Մասիսի այդ ակնարկութիւնը՝ եթէ այդ նըշմանակութիւնը և դիտումը չունէր, ապա ուրեմն շատ անխորհուրդ և անպատեհ էին Մասիսի գրած վերոյիշեալ տողերն, բայց քանզի Մասիս այնքան փորձառու և խոհական ճանչցուած անձ մնէ որ զրչին տակէն հազիւ հազ այսպիսի անխորհուրդ և անպատեհ տող մը կարենայ զիրար սպրդել, հետեւաբար մեծ իրաւունք կայ հաւատարմութեան Մասիս այդ տողերն բուն իսկ իրենց բնական նշանակութեամբն ու նպատակաւը ըրած էր, և թէ շատ անկեղծ էին իւր այդ գրածները, իր զգացմանց և զիտակցութեանը համարման զրած ըլլալուն համար: Մինակ անկեղծ չէր այս շք. աւուր առ այդ տուած իր բացատրութիւնը թէ ինքն ատենք խռովարարաց դէմն գրեր է, մինչդեռ՝ ինչպէս տեսնուք՝ այդ տողերուն մէջ խռովարարներն ակնարկող բառ մ'անգամ չկայ:

Մասիս մինակ մէկ բանով մը կրնար բզատիլ այս երկասյրի վիճակէն, բայց այդ Գի բուն

ալ չեմք կարծեր որ մօքէն իսկ անցուցած լինի:

Նա կրնայ ըսել թէ ազգային գործոց յուր և առ խարխախ ընթացքն դէմ իմ յայտնած դժգոհութիւնս ու տըրտունջս՝ ազգ. գործոց զլուխը գտնուող վարչութեան կամ իր միջնական սրբազանին դէմ չէր ընտել, այլ բուն իսկ Ներսիս ՊԱՏՐԻԱՐԿԻՆ դէմ էր, որ հեռանալով ազգային գործոց զլուխէն, իբր հրատարած՝ անհոգ ժամանակ կանցնէ ի Պէրթոյ:

Մասիս եթէ այս մտօք գրած է այն 6 տողը, այն ատեն Բեւ՝ կըսենք իրեն, իւր գրածը սխալ հասկնալու կամ մեկ ներուս համար, իսկ եթէ Մասիս Ս. Պատրիարքին դէմ գրած գոհութիւն մը չունի, այլ ազգ. գործոց այժմու տարտամ, անորոշ, վատթար և խարխախ նօք ընթացքն դէմ է որ կը դժգոհի, այն ատեն ինքը պարտաւոր է Բեւ՝ ըսել մեզի, յա. նիրաւի զմեզ չարախօսելուն համար իր բուն դիտումն սքողել ուզելով:

Մասիս ծագր մ'ալ կարճակէ ըսելով թէ՛ «կերեխի որ Լրագիր միշտ փառն ու կորուսեալ դատարու փաստարան կանգնիլն իրեն փառք կ'համարի»: Այո՛, առողջ և վաստակուած դատարու փաստարան կանգնիլը՝ Մասիս անգամ կընէ զայդ, իսկ փառք հոն է որ մարդ անիրաւութեան և կորստեան վրտանդի ենթարկեալ դատար մը փաստարան կանգնի, և մենք ակնածութեամբ հանդերձ կը խրատեմք զՄասիս, որ ինքն ալ այսպիսի տկար և կորսուելու վտանգին ենթարկեալ դատարը պաշտպանել նայի, զի հոն է իւր փառքը և ոչ թէ պահ մը յետոյ, հետեւեալ օրն ատկէ յետս ընկրկիլ փորձէ:

Մասիս կ'ըզնի որ զժողո-

վուրդը զրգուած ըլլալու ամբաստանութիւն մը չ'անբանայ իր վրայ: Սակայն մեք հաստատապէս գիտեմք թէ՛ Մասիսի սկզբունքն է անօրէնութեամբ վարուիլ անոր հետ՝ որ անօրէնութիւն կ'գործէ, ինչպէս 5-6 տարի առաջ երբ Մամաթիացիք, իրիմեանի օրով, զՔաղ. ժողովը ցրուեցին, տապալեցին, փախազեանն ու ֆրիստոստուրը բերան չաւնուելիք տեղեր վախցնելով, Մասիս էր այն ատեն գրողը թէ տկար և ապօրինաւոր վարչութիւն մը՝ ապօրինաւորութեամբ պէտք է լուծուի, եւ այս տողերը զրոգ Մասիսն է նաև այսօրուան այդ Մասիսը, որ չակնածիլ օրինաւորութեան եղանակաւ վարուիլ յանձնարարել այնպիսի անձանց դէմ, որք ամենայն անօրինութեամբ ժողովներէն մարդիկ կարտաքսեն, հակառակ օրինաց՝ նոր պաշտօնեանութեան քօնիկ կատեղդեն ու պաշտօնեայններ կ'կարգեն, Պատարարք տապալող անձերը ազգ. ամենափափուկ գործերու մէջ կառնուն, Պատրիարքն ազգ. գործոց զլուխն հեռի պահել կը նային իրենց խարխաւանութիւններովը, վերջապէս ապօրինաւորութիւն չ'մնար որ չը գործեն ու չպաշտպանեն, եւ դեռ Մասիս օրինաւորութիւն կ'քարոզէ ժողովրդեան:

Թերևս Մասիս ըսել ուղէ թէ՛ ժողովականք կրնան ուղած ատենին օրէնքէն չեղիլ և ապօրինաւորութիւններ գործել, իսկ ժողովուրդը ոչ երբէք կը փախաքէինք այդ սկզբունքը կամ վարչապետութիւնն ալ լըսել Մասիսի բերնէն:

Սակայն մեք հաստատապէս կըսեմք թէ՛ Մասիսի սկզբունքն է՝ անօրինութիւնը անօրինութեամբ հարուածել, և թէ ժողովրդային ցոյցերն փոխանակ անգանելու՝ ընդհակառակը քաջալերելու վերջին ատարեալի մօտ և սրամաղիլ է Մասիս:

2.14
2.14
2.16
2.15
40 00
15 00
40 00
20.00
00 00
69 00
66 00
62.00
21.00
4 08
3 50
5.25
4 03
3 10
43.00
09.20
87.19
90.00
51.10
19 00
18.20
06 24
80.00

սիս, որոյ նոր մէկ ապացոյցն ալ հասա :

Մասին իր շք. աւուր թերթին մէջ լեւս ժողովուրդը չեմ գրգռած ըսած խօսքը պարունակող էջին յաջորդող միւս էջէն սկսեալ անստորագիր յօդուած մը կ'հրատարակէ, որոյ մէկ ծայրէն միւսը՝ անիրաւ իշխանութեան մը կամ վարչութեան մը դէմ՝ ժողովուրդը ոտք հանելու հրաւեր և քաջաբեր մ'է պարզագէտ, և զոր Մասին առանց ուէ գիտողութեան կ'հրատարակէ, որոյ մէկ քանի մասերն աստանօր յառաջ բերելու հարկ կ'համարիմք :

Թուրքիոյ հայոց կրօն. նք. ւիրապետութեան մէջ, կըսէ Մասին նոյն յօդուածը, անիշխանութիւնն ու զեղծմունքը այն աստիճան սանձարձակ կը սլանան, որ կարծես Հայուն կրօն. անկախութիւնն ալ կրօնական գիմակով սքօղեալ չարագործներու, նենգաւորներու և բռնաւորներու հաճոյից ու խարդաւանութեանց գործիք դարձած է :

Չարմանալի չէ ուրեմն ժողովուրդն ալ այս պարագայից մէջ զօրացած և ատելութեամբ վառուած տեսնել այս կարգի կղերականաց դէմ :

Անոնք որ պակասութիւն կ'համարին ժողովուրդեան ցոյցերն և յանցանքը ժողովուրդեան կուզեն վերագրել, այնչափ կը սխալին՝ որչափ քաջաբերած կրէական նենգամիտ կղերականներն . . . Ձի շատ անգամ արդարութիւնն անիրաւութեան կենթարկի, եթէ օրէնք և իշխանութիւն պէտք եղածին չափ լուրջ, ազդու և ժողովրդական չըլլան, չըսելու համար որ եթէ ապօրինաւորութիւնը իշխանութեան կողմէն յարգուի և արդարութիւնը արհամարհուի . . .

Վինչու ծածկենք գիտնալն իս թէ մեր վարչութեան մէջ անիշխանական զեղծ բնթացք մը կ'տիրէ, երբ այսպիսեաց Իրաւունքն Գործնական վարչութեան մէջն ու շուրջը անպակաս են զազգը խարդաւանելու . . .

Ասի . . . հայ ժողովուրդեան դատաստանավճիռ մն է :

Մասին այս տողերն հրատարակելէ յետոյ, թող դարձեալ պնդէ թէ՛ լինք հաստատեալ օրինաւոր իշխանութեան դէմ ժողովուրդը չգրգռերս մինչդեռ իր հրատարակութիւնք կեցած են ահա ցոյց տալու թէ կատարելագէտ գրգիռ մ'են ժողովուրդեան այդ տողերն, և հոգ է Մասին ազգասիրութիւնն ու փառքն ալ, զորս ինքք թերևս աննշմար կուզէ անցնել :

Իմացունք թէ խառն ժողովուրդեկ Գումագարուի Պատրիարքարանը նիստ ընելով, դատական մասնախումբ մը ընտրել է, պաշտօն տալով նմա որ դշ. աւուր Ղալաթիոյ ժողովուրդային ցոյցին հեղինակներն ու գրգռ. ախներն հետախուզելով գտնէ և ատոնց համար պատիժներ տնօրինէ :

Չարմանալի՛ որոշում, որ Ս. Պատրիարքը ազգ. գործոց գրք. լուխը բերելու գնելու համար ժողովուրդային շարժումը պատժելու ելեր է վարչութիւնը :

Դա դատական մասնախումբը չմտնայ քարտանաց և գրք. խառնման պատիժն ալ անցնել իր ֆորթիւլին մէջ :

—Չէլթունի գործոցը համար արտաքոյ կտրգի կայս. քովսէր Սահտ բաշա, որն որ հիւանդութեան պատճառաւ ետ թողեր էր իր ուղևորութիւնը, երկկ արքունի յատուկ շոգենաւով Հայէպ մեկներ է :

—Իզմիտի ֆ. Առաջնորդ հայրը յս. 28ին Ատարազար հասնելով, անմիջապէս քննիչ ի պրահիմ պէլի ներկայացրէ է, իմանալու համար թէ Պօլսոյ ֆաղաքապետութեանն ստացած բարեօրմանց խոստումներն ղեռնաշատ պիտի ուշացնէ՞ գործարքել :

ՀՆՈՍԳՐԱԼՈՒՐՔ

Լոնտրա 18 օգոստ. Թունական խնդրոյն վրայ վերջերս Եւրոպայի Արքունեաց միջև կարծեաց փոխանակութիւն մը տեղի ունեցաւ, իտալական կառավարութիւնը փափաք յայտնեց յիշեալ խնդրոյն նկատմամբ Գաղղիոյ բռնած քաղաքականութեանը յարի բոլորովին Պ.Վատենկիթօն ալ յայտնեց թէ բոտ իւր համոզման, կարելի է մեծ Տէրութեանց միջև միակամ համաձայնութիւն մը յառաջ բերել, և թէ Գաղղիա երբէք չէ ուզած իր առանձին կարծիքը բռնի միջոցներով ընդունել տալ Թուրքիոյ, այլ թէ կուզէ այդ արդիւնքը ձեռք բերել Եւրոպայի համակամութեան բարոյական ճնշմամբ :

Թայմը կըսէ թէ պաշտօնական անկումներուն մէջ կ'կարծուի որ, Սովիթթ բաշա տրամադիր է եղեր Թեսաղիոյ մէջէն մինչև Սալամպրիա, Թրհալան ալ միատեղ, Եունաստանի թողուլ, ինչպէս նաև Եպիրոսէն ալ մաս մը մինչև Գօնիսթօլիս, բայց ոչ Եանեսան :

Ինչ ինչ զրոյցներու նայելով նախկին խօսիվ իսմայիլ բաշա խնդրեր է որ իրեն թոյլտուութիւն լինի երթալ ձէզայիլ բռնակելու, իսկ Գաղղիոյ կառավարութիւնը սերժեր է տալ

նմա հարկ եղած արտօնութիւնը Միւս կողմանէ տէրութիւնք դէմ չեն կենար այլևս իսմայիլ բաշային երթալ Կ. Պօլսա բնակելուն :

Հարաւային-ամերիկեան պատերազմը վերջացաւ, Իերուլի հանրապետութեան նախագահը Գիլիի հանրապետութեան հետ հաշտութեան գաշնագիրն ստորագրեց :

Վիէնայէն առնուած լրոց նախիվ, Անտրաչի կոմսը իր տուած հրատարակելու մէջ յայտնեց է թէ՛ Պերլինի դաշնագիրն ամբողջապէս գործարքութեանն ինքն ալիս քաղաքական գործերէն պիտի քաշուի, ուստի և խորհուրդ կ'տայ որ նովի պազարի մէջ աւստր. զօրաց բռնելիք որոշեալ գիրքերն անյապաղ գրաւուին, Անտրաչի կոմսը կ'յայտնէ նաև թէ մօտ ատենէն յունական խնդիրն ալ լուծուելով, ինքն ևս այն ատեն բոլորովին գործէ պիտի քաշուի :

Նմանապէս Վիէնայի հեռագիրք ալ կ'ծանուցանեն թէ Աւստր. կառավարութիւնը արտօնութիւն տուեր է Սէրայէվօ քաղքին անուանը փոխառութիւն մը կնքել, ինքն ալ անուղղակի կերպիւ զայդ երաշխաւորելով Սոյն փոխառութեանէն գոյանալիք գումարէն փոխ պիտի տրուի ամեն անոնց՝ որք յիշեալ գաղքին մէջ կուզեն տընեքին նորէն շինել, իւրաքանչիւր իր տունը աւանդ կամ երաշխաւորութիւն տալով փոխառած գումար ետքէն հետոցհետէ հատուցանելու պայմանաւ :

Գապուէն ալ կ'հեռագրեն թէ, Աֆղանիստանի Էմիրը Կա. գուպ խան, ուսական հրամա, նատար Բօֆման զօրապետին ուղղած մէկ պատասխանագրոյն մէջ յայտնեց է թէ, բոտ հրահանգի անգղ. դեսպանին, այսուհետև հարկ է որ իրեն (Էմիրին) հետ ըլլալիք հաղորդակցութիւնք՝ Հնդկաստանի կառավարութեան միջոցաւ կատարուին :

Պերլին 18 օգոստ. Բուսանիոյ Հրէից կատարեալ ազատութիւն տալ տրամադրող Պերլինի դաշնագրին այդ յօդուածը փոփոխելու համար, Բուսանիոյ Արաք. գործ, պաշտօնէին բրած առաջարկութիւնը Պիլմարք իշխանին կողմանէ բացէ ի բաց մերժուեցաւ :

Այս առաջ հասած Գահիրէ 18.—Պաշտօնէութիւնը հրատարական տալով, խըտիվին նախագահութեանը տակ նոր պաշտօնէութիւն մը կազմուեցաւ՝ Ձիլիթիքեար, Մբ. թաֆա Յէհմի, Հայտար, Օսման Բէֆթի, Մէհէմէտ Մաքլի եւ Ալի իպրահիմ բաշաներէն :

Ֆիլիպէ 18.—Վիթալիս բաշա երէկ կիրակի, Ֆիլիպէի պահակագնդին անցահանդէս մ'ընել տալէն յետոյ՝ կեղծ պատերազմական շարժում մ'ընել տուաւ զօրաց, որոց քաջամարտիկ զիրքին ու ճարպիկ շարժուածքին վրայ ամեն մարդգարմացաւ Բանակադաշտէնմեկնելու պահուն, Վիթալիս բաշա

տաճկերէն բանախօսութիւն մը բրաւ իւր զօրաց, որոնք ի պատասխանի՝ գալթաքին ընդգրքս նետեցին վեր, եռանդուն հուրրաներով, Ալէքօ բաշա և քաղաքային վերատեսուչք ներկայ չէին սոյն հանդիսին :

Բարիք 18.—50 նահանգներ իրենց գաւառական ընդհ. ժողովոյ նախագահներն հանրապետական մարդիկ ընտրեցին :

ԴՐԱՄԱԿԱՆ

Այս առաւօտ բացուեցաւ	19.17
Բուսանի	43.50
Թղթադրամ	805.00
Պղինձ	495.00

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեծ տէրութեանց դեսպանք երէկ նոյնիմաստ ծանուցագրեր հաղորդելով Բ. Դրան, ի պատասխանի սորա օտ. պատուիրակներուն ընտրուիլը ծանուցանող գրոյն յունական խընդրոյն բանակցութեանը համար, գոհունակութիւն կ'յայտեն և սոյն բանակցութեան մինչև ցարդ յապտուիք երկու կողմանց ալ շահերուն զնատկաբ համարելով, 48 ժամ պայմանաժամ կ'տան Դրան, որ յանձնախումբը գումարուելով բանակցութեան սկսի, Հետեւաբար վաղը կէս օրէն ետքը հելլենական սահմանադրոց յարգարման յանձնաժողովն իր առաջին նիստն բնել կ'յուսացուի :

Արդէն այս կիրակի օր գունմարեալ պաշտօնէից ժողովը՝ յիշեալ յանձնաժողովոյն ինչ հիման վրայ բանակցելու եղանակը նկատողութեան առնելով որոշիր է :

—Այս գիշեր ժամը Յին միջոցները Այլմանէրայ Լօնտաթաղէն հրդեհ պատահելով մէկ քանի թնի բաժնուեցաւ ու 3 ժամ շարունակելէն յետոյ, հազիւ ժամը 12ին կրցաւ առաջին առնուիլ Ծատ կողմերէ օգնութիւններ հասած էին, ինչպէս նաև Յէյէնի կոմսին ջրանկրաց խումբ և արքունի նաւարանին ջրհանակիր 2 շոգենաւները, տընդհատ կաշխատէին, իսկ փողոցներուն շատը նեղ, տներն ալ շատ խիտ և փայտակերտ հին շէքեր բլլալուն պատճառաւ, ամեն ջանք ապարդիւն կերէր, մինչև որ կրակը բացօթեայ տեղեր հասնելով կարելի եղաւ առաջին առնուիլ Հրդեհէն ուղղութիւնը դէպի Պալթ, Հայոց եկեղեցւոյն գրեթէ մօտեցած էր, մէկ քանի փողոց ետև օք կանգ առնելով Այլած թաղերն մեծ մասամբ յունարնակ և հայաբնակ են, տաճիկ և հրեայ շատ քիչ կայ, կորստին որքանութիւնը դեռ ճշիւ յայտնի չէ, բայց 200էն աւելի կ'կարծուի հրկիզեալ չէնքերուն թիւը, կըսեն թէ Լօնտա Հէլլաճի մը խառնութիւն վերլ յարկէն ելեր է հրդեհը :

—Գատարքէոյ Մօտա բոտ ած տեղը Պ. Ժ. Թուպիլիի այգիին պարտիզպանք սպաննուած, իւր կինը երկու կտոր եղած և երեք տարեկան ու 7 ամեալ զաւակներուն ալ մարմինը յոշտուած

կ'դանուի երէկ տաւուտի Սպան- նուած տեղէն մինչև ծովուն ե- ղերքը տեսնուած արեան հետ- քերէն կ'մակարեւուի թէ չա- րագործք ծովուն կողմէն եկեր ու գացեր են, ինչպէս նաև տանը մէջէն ուէ բան մը գող- ցուած չըլլալը, և մինչև իսկ անմեղ մանկանց սպանուիլը ցոյց կ'տայ թէ՛ խրուածներու ցեղին մէջ սովորական եղած անձնական ատելութեան և վը- րէժխնդրութեան պատճառ մը եղած ըլլալու է սոյն ոճրագոր- ծութեան ընդ շարժառիթը:

— Ծարաթ օր ծանուցինք թէ լուսալուսներէն 5-6 հո- ղի, իրենց արուեստակիցներուն ղէմ ուստիկանութեան կողմանէ գործուած անիրաւութեանը ղէմ բողոքելու համար ուրբաթ օր յի. 5. Սուլթանին աղերսագիր մատուցանելու նպատակաւ իւր- տաղի պալատան ճանրուն վոյ կեցած ըլլալուն պատճառաւ, ամենքը մէկանց բռնուելով բանտարկուեր են:

Լեանթ երէկուան թուովը մեր տուած սոյն լուրն հաստա- տելէն յետոյ կ'յաւելու նաևս բոյ թէ, ձերբակալելու սարաֆ- ներն բանտը նետելուն պէս, բանտին պահապաններն ստի- պեր են զանոնք բանտին աղ- տեղութիւններն աւելով մաք- րելու:

— Լեանթ—Էրալտ լրագիրն իր ուրբաթ աւուր թերթին մէջ յօդուած մը հրատարակելով, որոյ մէջ կըսէր թէ՛ երկիրն դը- րամի չգոյութեան պատճառաւ բարենորոգումներ չկարենալով գործադրել, փոխանակ այսքան իրաւոր սատար բանակ մը պահելու, աւելի լաւ է այդ թիւը կէսի իջցնել, և հետեւ ւարար բանակին ծախքէն ա- լելցած գումարը երկրին բար- ւոքմանը գործածել: Տպագրու- տեսչութիւնը սոյն յօդուածը օտմ: բանակին արժանապատ- ուութեանը դպչող ակնարկու- թիւն մը համարելով, երէկուը- նէ 6 ամիս գաղթման վճիռ արձակեց յիշեալ լրագրին դէմ:

— Սթամպուլ գաղղ. թերթն արժ. որն որ քառամսեայ դա- րարման դատապարտուած էր, պայմանաւաճ լրացած ըլլալով, երէկուընէ վերստին հրատարա- կութեան սկսաւ:

— Վի. 5. Սուլթանը կողմաց նուարչաւէն մեծ հաճութիւն գրալով, խոստացեր է ամեն տա- րի իւր ավակցութիւնը նուիրել սոյն հանդիսին:

— Սըր Լէ. յարտ և իւր Տիկի- նը, Հօպարթ բաշա և Սըր Լէ. յարտի քոյրն ու քեռայրը երէկ զիշեր երաբղի պալատը Սուր- թանին կողմէն ճաշի հրաւիր- ուեր և միատեղ բնութիւնը են:

Հետեւեալ գրութիւնը կը ղրկեն մեզ Ատարազարէն, հը- րատարակելու խնդրանք:

. . . Խմբագիր,

Քանի մեր ազգը լուսուո- ղութիւն և յառաջդիմութիւն կաղաղակէ, և այս երկու կա- ռեր կետերը գտնելու համար ամեն ճիգ կ'ընենք ու ոգւով չափ կաշխատի, գիւղաքաղա- քիս մէջ գտնուած հայերն ալ կարծես թէ միևնոյն աշխատան- քը և տքնութիւնը կ'ըջանն՝ որպէս զի խաւարի և յետադի- մութեան մէջ կ'մնան, մանա- լանդ կղերական դասը, որ ա- տեն անոնք պիտի ըլլային աւե- լի աշխատողը՝ որ ալ ևս վեր- նայ 30-40 տարի առաջուան մո- լեանդութեամբ և կոյր կրօ- նամուրթեամբ գործուած ան- տեղութիւնները, և Հայ՝ ժողո- վուրդը միանան սիրով և եղ- բարարար գործելով, մանա- լանդ տեղոյս մէջ ներկայիս կատարուած խժեժութեանց և անկարգութեանց ղէմ իբր թուժա ու պատուար կենալու, ու միաբանութեամբ աշխատե- լու, որպէս զի կենաց և ընչից անապահովութիւնները բարձը- ուելով ամեն ազգ իրարու հետ սիրով և անգործուէտ կեանք մը անցընելու կարող ըլլայ, մինչ տեղոյս մահմետական ժողո- վուրդը անգամ իրենց ունեցած շատ մը թէ քաղաքական և թէ կրօնական մոլեռանդութիւննե- ը ձգած կոշխատին, որպէս զի քրիստոնէից հետ միաբանին եղած անտեղութեանց առջև առնելու համար, ցաւալի է ը- սել որ՝ մեր հայ կղերք, քրիս- տոնեայ կղերք իւր ունեցած մէկ մեծ և զխաւոր պարտաւորու- թիւնը մոռնալով և մի միայն ասելութեան ոգւով, սա հե- տեւեալ իրողութիւնը կատա- րեց:

Ամսոյս 28ին գիշերը Ազար- եանց մեծ քոյրը 40-41 տարե- կան բարի և ազնիւ կինը՝ թէ իր ընտանեաց և թէ իրեն վե- րաբերեալներուն ու ղինքը ճան- չոյ բոլոր անձանց սէրը զրա- ւած՝ իր մահկանացու կեանքը կնքեց ի խոր ցաւ և ի մեծ սուգ իւր ընտանեաց և բոլոր ղինքը ճանչցողներուն: Այս աղ- նիւ կինը 40 տարիէ ի վեր Ա- լետարանական մ'եղած էր, եւ բազում վկայութեամբ հաստա- տուած էր թէ՛ ինքը քրիստոն- եայ և ընտիր կեանք մ'անցու- ցած էր, Հոս իմ միտքս ոչ իր դամբանականը գրել է և ոչ ալ իրեն գեղեցաստանը մխիթարել, զոր կրկինք իր Ս. Հոգւովը մը- խիթարէ, իսկ զիստաւորութիւ- նըս է՝ տեղոյս կրօնական դա- սուն այսու պատահութեամբ մոլեռանդարար կատարած մէկ ղէպը պատմել, ի մեծ ցաւ

սրտի բոլոր լուսամիտ հասարա- կութեան և ի լուր աշխարհի Ազարեանց ձերունադարգ մայ- րը իւր սիրելի աղջկան մահուա- նէն անմիջապէս ետքը իր գու- կին կարպետ էֆի կըսէ թէ՛ «գաւակս, հայրդ նիկիոյ մէջ մեռաւ ու առանց երեսն ան- գամ տեսած ըլլալուս՝ հոն թա- ղուեցաւ: Եղբայրդ՝ Պետրոսիկս՝ անցեալ տարի ճիշդ այս ատեն ներս Պոլիս մեռաւ ու հոն թա- ղուեցաւ: միայն փոքր քոյրիկդ թագուհին, հոս մեռած ու թա- ղուած է. (ասի Ազարեանց փո- քրը քոյրն է՝ որ 8 տարի ա- ռաջ իր ծաղիկ հասակին մէջ մեռած է) ուստի կ'իմքրեմ որ այս քոյրդ ալ մեր գերեզմանը թաղուի. (գիտնալու է որ այս գերեզատանին մինակ այս քոյ- րը և իրենց մեծ եղբայրը Ա- լետարանական են, իսկ մնացա- ծը Լուսաւորչական) որպէս զի գոնէ այս երկու սիրելի զաւակ- ներս միևնոյն գերեզմանի մէջ և իրարու քով թաղուած ըլլան:

Յիշեալ էֆէնտին կարծելով թէ մեր ազգայինք սիրով պիտի ընդունին այս առաջարկութիւ- նը, և վախճալով որ չըլլայ թէ Ալետարանականաց կողմանէ՛ իր քեռայրին (այս ալ աւետա- րանական է) կողմանէ դժուա- րութիւն մը ծագի, նախ՝ ստոնց կառաջարկէ իւր վշտացեալ և ձերունի մօր խնդիր, ասոնք ա- մենայն սիրով կընդունին, և կը- սեն թէ՛ մենք ամենին այս տեսակ խարութիւն մը չունինք մեր սիրելի ազգին հետ, և ին- չու ունենան, ուստի ուրախ ըլ- լալով որ իր խորհածը դժուա- րութեանց չհանդիպեցաւ: Առ- տուանց ժամը 9 1/2ին ատեն ներք դեռ չլուսցած՝ հոս զբտ- նուող տեղացի Ստեփաննան Արժ. Յակոբ վարդապետին՝ ա- ռաջնորդական տեղապահին լուր կ'ըրկէ, որպէս զի նոյն օրը, կիրակի, եկեղեցիէն վերջ ժամը 4 1/2ին ատենները գոյ գտնը- ւած բոլոր կղերին հետ և ըստ վայելչութեան կարելի եղածին չափ փառաւորութեամբ ննջեց- եալին յուղարկաւորութեան և եկեղեցական պաշտօնը կտա- րէ, ըստ իւր և ըստ իւր վշտա- ցեալ մօրը փափաքը կատար- ուելու համար, վերոյիշեալ վար- դապետը անմիջապէս նամակ մը կ'ըրէ Աթոռակալ էֆի որպէսզի շուտով կրօնական ժողով մը դու- մարելով սոյն խնդիրը կարգա- գրուի, և միևնոյն ժամանակ Ա- զարեան էֆի ալ մխիթարական գիր մը գրելով հանդերձ կի- մացնէ թէ՛ պէտք եղածը պիտի անօրինէ, բայց նամակատարը լուր առնելով թէ Աթոռակալ էֆին հոն չէ, նամակը ֆ. Աթո- ռակալին կ'առնի, և անկէ՛ յըն-

ջեցելոյն տունը գալով լուր կը րերէ թէ՛ փոխ-աթոռակալը բաւ որ՝ այս բանին համար բնագիտութիւն ըլլալու բան մը չկայ, ուստի թող ինքը պէտք ե- ղածը ընէ, բայց ննջեցելոյն տնէն կրկին լուր կ'ըրկուի որ հաստատ պատասխան մը տրուի իրենց, որպէս զի ըստ այնմ՝ պէտք ե- ղած կարգադրութիւնքը ըլլան:

Ասոր վրայ ալ լուր մը առ- նուեցաւ թէ՛ Ս. կարապետ թա- ղի քահանայները բոլորը մէկէն Ս. Հրեշտակապետ եկան որպէս զի արարողութեան ներկայ գտնուին, վերջը ուրիշ լուր թէ՛ կրկին ետ դարձեր են, որպէս զի Առաջնորդարանը կրօնական ժողով մը ընեն, ժամանակը կանցնի, և դեռ ստոյգ լուր մը չ'առնուիր, ննջեցելոյն տու- նէն այս եղած բաներուն պատ- ճառը չգիտնալով Ազարեան է- ֆէնտին իրարու ետեւէ 8 հո- գիներ կ'ըրկէ, որ չուտով այս՝ կամ՝ ոչ պատասխան մը բերուի, վերջապէս ժամը 4ին երկու հո- գի կուգան, և կ'իմացնեն որ՝ կրօնական ժողովը ննջեցելոյ չի թաղել որոշեր է, ուստի Ա- լետարանականք հանդիսաւոր կերպիւ աւելն ննջեցելոյ, և մեծ բազմութեամբ թաղեցին: Ատելութիւն, մոլեռանդու- թիւն և կոյր կրօնամուրթիւն բառը գործածեցի վերջ, և ի- րաւունք ալ ունիմ, քանզի կը հարցնեմ թէ՛ ինչ էր պատճա- ռը որ ննջեցեալը լուսաւորչա- կան Հայոց գերեզմանատունը չի թաղուեցաւ, դիցուք թէ՛ Մայր մաշտոցին մէջ անանկ հը- րաման մը կենայ թէ՛՝ ամեռեալ մը քանի որ վերջին խորհուրդը ընդունած չէ, լուսաւորչական գերեզմանին մէջ չի թաղուիր: Այն ատեն ըսելիք չմնար կրօն- ժողովին, ինչու որ ըստ եկե- ղեցւոյ կանոնագրութեան գոր- ծեցին, բայց միթէ մինչև որ այս ննջեցեալը պատահեցաւ, եկեղեցւոյ այդ կանոնադրու- թիւնը տեսնուած չէր, արդ- ևօք դաւառին փոխ առաջնորդ Ս. Հայրը եկեղեցւոյ կանոնը չը գիտէր, որ նիկիոյ վայր մէջ լուսաւորչական գերեզմանն ըն- դունեց Անգղիացիները՝ որք պատերազմական զրահաւորի մը մէջ փոսնգի մը զոհ գացին, և ան ալ ինքը եկեղեցւոյ ըզ- գեստներ հագած՝ մեծ հանդի- սիւ թաղեց: Արդեօք այս կը- րօնական ժողովը միտակ եկե- ղեցւոյ ատ կանոնը կարգալ գի- տեն, և այն ալ կարգը Ազա- րեանց էֆին եկած ատեն՝ ու չեն կարգար յրագիրք՝ որոց մէջ քանի քանի անգամներ ուրիշ կրօնքէ մարդիկներ լու- սաւորչական գերեզմանի մէջ թաղուիլը հրատարակված է, և նաև՝ չի թաղող կամ թաղուե- լուն ղէմ կ'եցող կղերականք:

